

“ՍԱ ՌՈՒՍՈՒՄՆԻ ... ԽԱՅՏՈՒՄԿՈՒՄՆ Է: ՆԵՐԵՑԵՔ, ՀԱՅԵՐ...”

Posted on March 15, 2016 by Keghart



Category: [Opinions](#)



պայմանագիրը, որովհետև այն ժամանակ տկար էինք»: Իսկ հիմա «մենք ուժեղ ենք և պահանջում ենք վերականգնել Հայաստանի սահմանները»:

Փարիսեցիություն, կեղծիք, տխմար, սակավամիտ պահվածք, զոռբայություն... Այլ բառեր չեն ել գտնում գագամունքների արտահայտելու համար: Նա պահանջել է «վերականգնել Հայաստանի սահմանները»: Ներեցեք, սիրելի ընթերցողներ, կտրուկ տոնի համար, բայց մեկը լինեք հարցներ նրանց. իսկ ո՞ր սատանան ձեզ դրդեց թուրքերին գիջել ձեզ չպատկանող տարածքները: Որոշ ժամանակ ել անց «դիվանագետ» կոչվող այս վիժվածքները շարունակեցին առևտուրը Հայաստանի հաշվին և թուրքին հանձնեցին նաև Արցախն ու Նախիջևանը:

1921 թվականի Մոսկովյան պայմանագիրը դավաճանություն է, դիվանագիտական խաղերով քողարկված իսկական ուխտադրություն ոչ միայն Հայաստանի, այլև ռուսական շահերի տեսանկյունից: Դավաճանված է մեր զինվորների թափված արյունը, բոլոր նրանց, ովքեր թաղված են Գյումրիի Պատվո Բլուրմ: Դավաճանված է ռուս գեներալ Յուդենիչի ռազմիկների հիշատակը, ովքեր վերականգնել են պատմական արդարությունը` ազատագրելով հայկական հողերն ու հասնելով Բոսֆոր և Կոնստանդնուպոլիս: Պղծված է և Երզրումի ու Սարիղամիշի համար մարտնչած հայ և ռուս զոհված հերոսների սուրբ հիշատակը:

Դավաճանված են նաև իմ նախնիները. նախևառաջ նախապապերիցս մեկը` կազակ Ֆիլիպ Ստեպանովիչ Կոստիրոն, ով ազատել է Կարսը, կռվել է Սարիղամիշում, իսկ հետո Մերձավոր Վոլգայի մոտ, Պենզա քաղաքում, իր ձեռքերով կառուցել է երկհարկանի առանձնատուն (Ներկայիս Կալինինի փողոցում), որտեղ ապրել է և իր հայազգի մարտական ընկերոջ` Հովհաննեսի ընտանիքը: Այդ ստոր արարածները հետագայում բռնադատել են և Հովհաննեսին, և իմ նախապապին: Երկրորդ նախապապս` բանակային քահանա Ալեքսանդր Կոնդրատյեվիչ Կվասովը, եղել է ռազմական տարբեր թատերաբեմերում, այդ թվում` Կովկասյան ճակատում, խոստովանեցնում էր զինվորներին, ոգևորում նրանց, մխիթարում վիրավորներին: Նա հրաժարվել է հանել խաչը և կախաղան է բարձրացվել հենց եկեղեցու զանգակատան մեջ` Զյոռնի Չատուն գյուղում: Այդ ամենի համար ես երբեք չեմ ների կոմունիստներին:

Նրանք, ովքեր ստորագրել են այդ պայմանագիրը, պարզապես թքած ունեին թե Ռուսաստանի, թե Հայաստանի վրա: Իմ երկրում իշխանության էին եկել չարչիական հոգեկերտվածք ունեցող թափափուկները, սադիստական հակումներով աչքի ընկած թմրամուլներն ու պասիվ պեդերաստները, որոնց համար որևէ սրբություն գոյություն չունեն: Այդ կեղտոտ խաժամուժը վերածել էր իսկայական երկիրը մթերային խանութի, որտեղ ամեն ինչ վաճառքի էր հանված:

Այժմ մեր քաղաքական գործիչները կրկին սկսեցին խոսել ռուս-թուրքական պայմանագրի չեղարկման անհրաժեշտության մասին: Չեմ հավատում, անկեղծորեն ուզում եմ, բայց կտրականապես հրաժարվում եմ հավատալ նրանց, ոչ ոք ինքնակամ չի հրաժարվի տարածքներից, միջազգային հանրությունն էլ հազիվ թե մասնակցի Թուրքիայի մասնատմանը: Հետևաբար, դրանք սոսկ պոպուլիստական հայտարարություններ են:

Եզրափակելով խոսքս, ուզում եմ ներողություն խնդրել հայ ժողովրդից իմ երկրի տգեղ ու ամոթալի

դիվանագիտական արարքի համար: Ներեցեք մեզ, հայեր, մեզ դավաճանել են ձեզ հետ միասին: Հրեաները գրեթե երկու հազարամյակ միխթարում էին միմյանց հետևյալ խոսքերով. «Մենք դեռ կտեսնենք մեր Պաղեստինը»: Ուրեմն և մենք բոլորս պետք է ցանկանանք ու հավատանք, որ Արարատ լեռն ու հայկական տարածքներն անպայման վերադառնալու են իրենց իսկական տիրոջը և պատմական արդարությունը վերականգնվելու է: Իսկ մենք պարզապես պետք է ամեն կերպ, հնարավոր բոլոր միջոցներով մոտեցնենք այդ օրը:

